ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Ստեղծագործության նկատմամբ հեղինակային բացառիկ իրավունքները փոխանցելու մասին

«12» հունվարի, 2011թ. ք. Երևան

«Արեգ-93» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, ի դեմս ընկերության տնօրեն **Սամվել Գասպարյանի**, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Հրատարակիչ), մի կողմից, և բառարանի հեղինակներ **Սամվել Գասպարյանը,** անձնագիր՝ AK 06020495, 004, հասցե՝ ք. Երևան, Գյուլբեկյան 35/1, բն. 10 և **Մարիամ Կիրակոսյանը,** անձնագիր՝ AB 0648581, 004, հասցե՝ ք. Երևան, Կիևյան 24, բն. 26 (այսուհետև Հեղինակներ), մյուս կողմից, միասին կոչվելով Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1.Պայմանագրի առարկան

1.1. Հեղինակները Հրատարակչին են փոխանցում **«Հայերեն-ռուսերեն-ռուսերեն-հայերեն» բառարանի (55.000 բառ և արտահայտություն)** նկատմամբ հեղինակային բացառիկ (գույքային) իրավունքները սույն պայմանագրով նախատեսված ժամկետներում և պայմաններով օգտագործելու համար:

1.2. Հրատարակիչը պարտավորվում է Հեղինակներին հատուցում վճարել սույն պայմանագրով նախատեսված չափով և կարգով:

1.5. Հեղինակները երաշխավորում են, որ հանդիսանում են Օբյեկտի նկատմամբ հեղինակային իրավունքի իրավատերը:

2.Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1.Սույն Պայմանագրի համապատասխան Հեղինակների կողմից Հրատարակչին են փոխանցվում հետևյալ իրավունքը՝ Օբյեկտն օգտագործել Հրատարակչի ֆիրմայի անվանման ներքո:

2.2.Հրատարակիչը սույն պայմանագիրը ստորագրման պահից հետո՝ 30 օրվա ընթացքում Հեղինակներին վճարում է յուրաքանչյուրին **300.000 (երեք հարյուր հազար)** դրամ:

2.3.Հրատարակիչն Օբյեկտն օգտագործելու ընթացքում պարտավորվում է պահպանել Հեղինակների ոչ գույքային իրավունքները և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պաշտպանել Օբյեկտն այլ անձանց ապօրինի օգտագործումից:

3.Կողմերի պատասխանատվությունը

3.1.Սույն Պայմանագրով իր պարտավորությունները չկատարած կամ անպատշաճ կատարած Կողմը հատուցում է մյուս Կողմին՝ դրանով պատճառված վնասները:

3.2.Պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով, շահույթ ստացած Կողմը պարտավոր է մյուս Կողմին, վնասների հետ մեկտեղ, հատուցել նրա բաց թողնված օգուտը՝ ստացված եկամուտներից ոչ պակաս չափով:

4.Պայմանագրի լուծումը և փոփոխումը

4.1.Փոխադարձ գրավոր համաձայնության դեպքում Կողմերը կարող են վաղաժամ լուծել սույն Պայմանագիրը:
4.2.Հեղինակները իրավունք ունեն լուծելու Պայմանագիրը հետևյալ դեպքերում՝
ա) Հրատարակչի կողմից Հեղինակներին սույն Պայմանագրով կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված վարձատրությունը չվճարելու դեպքում,
բ) Սույն Պայմանագրով նախատեսված ՀՀ տարածքից դուրս ստեղծագործությունների օգտագործման դեպքում:
4.3.Սույն Պայմանագրի բոլոր փոփոխությունները և լրացումները պետք է կատարվեն գրավոր, և պատշաճ ձևով ստորագրվեն Կողմերի կողմից:

5.Վեճերի լուծման կարգը

5.1.Բոլոր վեճերը և տարաձայնությունները, որոնք կապված են Կողմերի՝ սույն Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման հետ, լուծվում են բանակցությունների միջոցով:
5.2.Բանակցությունների միջոցով վեճը չլուծելու դեպքում վեճը լուծվում է դատական կարգով:

6.Եզրափակիչ դրույթներ

6.1.Բոլոր այն հարցերը, որոնք կարգավորված չեն սույն Պայմանագրով, կարգավորվում է ՀՀ օրենսդրությանը համապատասխան:
6.2.Սույն Պայմանագրի կատարման ընթացքում ծանուցումները Կողմերը միմյանց պետք է ուղարկեն գրավոր:
6.3.Սույն Պայմանագիրը կազմված է երկու հավասարազոր օրինակներից, յուրաքանչյուր Կողմին տրվում մեկ օրինակ:

7.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Հրատարակիչ

«Արեգ-93» ՍՊԸ
Բաղրամյան 70, բն. 2
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
h/h 220003334897-000
ՀՎՀՀ 01502032
Տնօրեն / Ս. Գասպարյան

Հեղինակներ

Սամվել Գասպարյան
Հասցե՝ Գյուլբենկյան 35/1, բն. 10
Անձնագիր՝ AK 06020495, 004
Սոց. քարտ 2907480189

Մարիամ Կիրակոսյան
Հասցե՝ Կիևյան 24, բն. 26
Անձնագիր՝ AB 0648581, 004
Սոց. քարտ 5407610167